ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Վեդի **«30» «օգոստոս» 2018թ.**
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ.Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ	Ռ.Եղիազարյան
	Ա. Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա.Վարդանյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
1.2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ,
1.3. Հանձնաժողովի ընդունած որոշումները,
1.4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին տեղեկություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի օգոստոսի 23-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն թվականի օգոստոսի 27-ին տրամադրվել է հարցման մասին տեղեկատվությունը:

3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի օգոստոսի 23-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի օգոստոսի 27-ին ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

4.1. Հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի դրույթները, հանձնաժողովի նիստը կասեցնել:

4.2. Հիմք ընդունել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և «Մարիշին» ՍՊԸ -ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

4.3. Հանձնաժողովի քարտուղարին.

Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել «Մարիշին» ՍՊԸ -ին բանակցությունների վարման վայրի օրվա և ժամի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին տեղեկություններ:

Գնման ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի վարչական շենքում, Արարատի մարզ, ք.Վեդի, Կասյան 79 հասցեում՝ «Մարիշին» ՍՊԸ-ին գնային առաջարկի նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման վերաբերյալ ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը ժամը 11:30:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ	_____	Վ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Ռ. Եղիազարյան
	_____	Ա.Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Ա.Վարդանյան